Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
մայիսի 2-ի N 621 - Լ որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 38-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ ՊԱՀԱՆՋՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՎԱԾ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ

1. Ծրագրի նպատակն է օժանդակել «Հանրակրթության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջով մասնագիտական գործունեությունը դադարեցված բարձրագույն կրթություն չունեցող մանկավարժներին՝ խրախուսելով նրանց մասնագիտական զարգացումը:

2. Ծրագրի շահառու հանդիսացող անձը կարող է՝

1) դիմել բարձրագույն ուսումնական հաստատություն և պահանջվող փաստաթղթերի հիման վրա կրթություն ստանալ ուսուցչի որակավորում շնորհող ինստիտուցիոնալ հավատարմագրում ունեցող բարձրագույն ուսումնական հաստատություններից (այսուհետ՝ բուհ) մեկում՝ համապատասխան կուրսում կամ շարունակել այն՝ ընդհատված լինելու դեպքում.

2) կամավոր ատեստավորվելու համար մասնակցել Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի N 596-Ն որոշման 78-րդ կետով սահմանված վերապատրաստմանը.

3) միաժամանակ մասնակցել սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված ծրագրերին:

3. Բարձրագույն կրթություն ստանալու համար ծրագրի շահառուի ուսման վարձը փոխհատուցվում է պետության կողմից՝ այդ նպատակով բուհին համապատասխան դիմում ներկայացնելու դեպքում:

4. Սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված դեպքում բուհն ամփոփում է ֆինանսական աջակցություն ունեցող շահառուների տվյալները և ամփոփ տեղեկատվությունը ներկայացնում Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե՝

շահառուների մասին ամփոփ տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) փոխանցելու և ընդունելության գործընթացն իրականացնելու համար:

5. Նախարարությունը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ներկայացրած տեղեկատվության հիման վրա ամփոփում է ֆինանսական աջակցության կարիք ունեցող շահառուների տվյալները և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնում համապատասխան ֆինանսական միջոցների հատկացման նախագիծը, որի հաստատումից հետո նշված բուհի հետ կնքված պայմանագրերով վերջիններիս փոխանցում շահառուների ուսման վարձի փոխհատուցման միջոցները՝ տվյալ կիսամյակի համար:

6. Հետագա կիսամյակների ուսման վարձի փոխհատուցումը դադարեցվում է, եթե շահառուն չի ապահովում առնվազն 60 % միավորների որոշիչ գնահատական (ՄՈԳ) կամ դադարեցնում է ուսումնառությունը:

7. Եթե շահառուն որոշում է մասնակցել կամավոր ատեստավորման առաջիկա փուլին, ապա կարող է դիմում ներկայացնել նախարարություն՝ կամավոր ատեստավորումը չհաղթահարած ուսուցիչների համար պետության կողմից կազմակերպվող վերապատրաստմանը մասնակցելու համար:

8. Նախարարությունն ամփոփում է շահառուների տվյալները և օրենսդրության համապատասխան՝ կազմակերպում վերջիններիս վերապատրաստումը՝ այդ նպատակով պետական բյուջեում սահմանված միջոցների շրջանակներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

02.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ